ԵՐԵՎԱՆԻ
ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ
ԱՅԳԻ

ԵԿ-037-2023
12.05.2023թ.

«ԳԱՍՊԱՐ 06» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ԿԱՐԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ
/ՀՀ, Զինավան 5/ԴՕՍ3/37 բն, Հովտաշատ 0813, Հովտաշատ
Արարատ Հայաստան, հեռ.՝ +37477829911/

Հարգելի՛ տիկին Գասպարյան,

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի /այսուհետ նաև՝ Այգի/ կարիքների համար 2022 թվականի նոյեմբերի 21-ին հայտարարված սննդամթերքի և կերերի ձեռքբերման ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում 7, 33, 39, 41, 58, 59, 64, 65, 71, 81, 82, 86-ից 95-րդ չափաբաժինների մասով, որպես ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «ԳԱՍՊԱՐ 06» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 04444865, գործունեության հասցե՝ ՀՀ, Զինավան 5/ԴՕՍ3/37 բն, Հովտաշատ 0813, Հովտաշատ Արարատ Հայաստան, հեռ.՝ +37477-829911, էլեկտրոնային հասցե՝ maria210909@mail.ru), որի հետ 33, 39, 41, 58, 59, 64, 65, 71, 81, 86-ից 95-րդ չափաբաժինների մասով 05.01.2023թ-ին կնքվել է ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1-4 ծածկագրով, իսկ 7-րդ և 82-րդ չափաբաժինների մասով 01.02.2023թ-ին կնքվել է ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1-8 ծածկագրով ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագեր (այսուհետ՝ Պայմանագրեր), որոնց շրջանակներում, հետագայում՝ ֆինանսական միջոցների հատկացմամբ պայմանավորված՝ համապատասխանաբար 05.01.2023թ-ին և 31.01.2023-ին կնքվել են նաև ֆինանսական միջոցների հատկացման և վճարման ու գնման ժամանակացույցների հաստատման համաձայնագրեր:

25.04.2023թ-ին Ձեր կողմից ներկայացվել է գրություն, համաձայն, որի չեք կարող կատարել Պայմանագրերով ստանձնված պարտավորությունները, քանի որ գտնվում եք լուծարային գործընթացում:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև՝ այն հանգամանքը, որ «ԳԱՍՊԱՐ 06» ՍՊԸ-ն թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ Այգու կարիքների համար սնունդի

ձեռքբերումն ունի կենսական նշանակություն և կարող է հանգեցնել կենդանատեսակների անկումների և ամբողջովին խաթարել Այգու գործունեության բնականոն ընթացքը, Այգու կենդանիների կերակրման առաջնահերթությամբ և հրատապությամբ պայմանավորված, «ԳԱՍՊԱՐ 06» ՍՊԸ-ի հետ կնքված ապրանքի մատակարարման ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1-4 և ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1-8 ծածկագրով պայմանագրերի չմատակարարված քանակությունների մասով նշյալ Պայմանագրերի միակողմանի լուծվել են:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ առաջարկում ենք 10 աշխատանքային օրվա ընթացում՝ մինչև ս.թ. մայիսի 25-ը ներառյալ, ապահովել ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1-4 ծածկագրով պայմանագրի չմատակարարված քանակությունների մասով 788,948.00 (յոթ հարյուր ութսունութ հազար ինը հարյուր քառասունութ) ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման համար և 1,183,422.00 (մեկ միլիոն մեկ հարյուր ութսուներեք հազար չորս հարյուր քսաներկու) ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման մասով, ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1-8 ծածկագրով պայմանագրի չմատակարարված քանակությունների մասով 235,110.00 (երկու հարյուր երեսունհինգ հազար մեկ հարյուր տաս) ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման համար և 352,665.00 (երեք հարյուր հիսուներկու հազար վեց հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ որակավորման ապահովման մասով, վճարների գանձումը:

Վերոնշյալի վերաբերյալ Այգին դիմել է Ձեզ սպասարկող բանկին՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ին:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումների անհնարինության դեպքում Այգին վերոգրյալի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
«ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀՈԱԿ-Ի
ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԻՏԱԿԱՆ ԳԾՈՎ
ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ **ԱՇՈՏ ԱՍԼԱՆՅԱՆ**